ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու վերաբերյալ

2024

Ուղեցույցի նպատակն է ներկայացնել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ միության) ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու դեպքում գործող կարգավորումները:

ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԱՆԵԼԻՍ

Ուշադրություն

Հայաստանի Հանրապետության սահմանով ֆիզիկական անձանց կողմից ապրանքների տեղափոխմանը վերաբերող կարգավորումներին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ այցելելով ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջ՝
https://src.am/am/getMenusContents/266:

Հնարավոր է անցում կատարել նաև հետևյալ QR կոդով՝

1. Ենթակա՞ են արդյոք հայտարարագրման ֆիզիկական անձի կողմից ուղեկցվող ուղեբեռով, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխվող, միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները.

Միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխելիս՝ ենթակա չեն մաքսային հայտարարագրման (բացառությամբ՝ ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող պետության տարածքով Հայաստանի Հանրապետություն ապրանքների տեղափոխման դեպքերի, երբ ուղևորային հայտարարագրի ձևաթղթի օգտագործմամբ պահանջվում է իրականացնել ապրանքների նույնականացում).

2. Ի՞նչ է հարկավոր անել՝ ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող պետության տարածքով Հայաստանի Հանրապետություն միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքները ուղեկցվող ուղեբեռով տեղափոխելիս, այդ ապրանքների միության ապրանքի կարգավիճակը պահպանելու համար.

ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող պետության տարածքով Հայաստանի Հանրապետություն՝ միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքներն ուղեկցվող ուղեբեռով տեղափոխելիս, այդ ապրանքների կարգավիճակը պահպանելու համար միության ապրանքներ հանդիսացող ապրանքները պետք է նույնականացվեն ուղևորային հայտարարագրի ձևաթղթի օգտագործմամբ:

3. Ինչպես է իրականացվում ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող պետության տարածքով Հայաստանի Հանրապետություն ուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող՝ միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների նույնականացումը, ապրանքների միության կարգավիճակը պահպանելու համար.

Նույնականացումն իրականացվում է մեկնման վայրի մաքսային մարմնի կողմից՝ ուղևորային մաքսային հայտարարագրի ձևաթղթի օգտագործմամբ, որում ֆիզիկական անձը նշում է տեղեկություններ իր մասին, ինչպես նաև այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս նույնականացնելու ապրանքները:

Ուշադրություն.

Ժամանման վայրի մաքսային մարմնում ապրանքները դիտարկվում են որպես միության կարգավիճակ ունեցող՝ մեկնման վայրի մաքսային մարմնի ծառայողի կողմից «Ծառայողական նշումների համար» բաժնում «Եվրասիական տնտեսական միության ապրանքներ» նշագրման և մեկնման վայրի մաքսային մարմնի պաշտոնատար անձի անձնական համարակալված կնիքի դրոշմվածքի առկայության դեպքում:

4. Երբ չի պահանջվում նույնականացում՝ ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող պետության տարածքով Հայաստանի Հանրապետություն՝ ուղեկցվող ուղեբեռով տեղափոխվող միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների կարգավիճակը պահպանելու համար.

Նույնականացում չի պահանջվում՝

• Միության անդամ պետություններում հաշվառված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների տեղափոխման դեպքում,

• առանց Միության անդամներ չհանդիսացող պետությունների տարածքներում միջանկյալ վայրէջք կատարելու օդային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների տեղափոխման դեպքում,

• միության անդամ չհանդիսացող պետություններից՝ առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման՝ ԵԱՏՄ մաքսային տարածք ապրանքների ներմուծման թույլատրելի արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերը չգերազանցող ապրանքների տեղափոխման համար՝ բացառությամբ այն ապրանքների, որոնց մասով ենթակա են պահպանման արգելքներ ու սահմանափակումներ՝ ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 7-րդ հոդվածին համապատասխան:

5. Ինչ տեղի կունենա միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների հետ, եթե ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող պետության տարածքով Հայաստանի Հանրապետություն տեղափոխվող ապրանքները, ֆիզիկական անձի կողմից չհայտարարագրվեն «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով կամ տեղափոխման համար չնույնականացվեն ուղևորային մաքսային հայտարարագրի միջոցով:

ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող պետության տարածքով Հայաստանի Հանրապետություն տեղափոխվող ապրանքները, ֆիզիկական անձի կողմից «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով չհայտարարագելու, կամ ուղևորային մաքսային հայտարարագրի միջոցով չնույնականացնելու դեպքում, այդ ապրանքները կկորցնեն միության ապրանքի կարգավիճակը, և ժամանման վայրի մաքսային մարմնի կողմից կդիտարկվեն, որպես օտարերկրյա ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքներ:

Ուշադրություն.

Այդ դեպքում ֆիզիկական անձի մոտ առկա ապրանքները ՀՀ պետք է ներմուծվեն այն նույն կարգով և պայմաններով, որը գործում ոչ ԵԱՏՄ անդամ երկրներից տեղափոխվող ապրանքների նկատմամբ:

6. Գանձվում են արդյո՞ք մաքսային վճարներ՝ ֆիզիկական անձի կողմից ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխվող, միության ապրանքի կարգավիճակ ունեցող, անձնական օգտագործման ապրանքներից.

Ֆիզիկական անձի կողմից ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխվող, միության ապրանքի կարգավիճակ ունեցող, անձնական օգտագործման ապրանքներից մաքսային վճարներ չեն գանձվում:

Ուշադրություն.

Առևտրային քանակներով ներմուծվող ապրանքների համար կարող են առաջանալ հարկային պարտավորություններ:

7. Ինչպիսի՞ հարկային պարտավորություններ կարող են առաջանալ ֆիզիկական անձանց համար՝ ԵԱՏՄ անդամ պետություններից միության կարգավիճակ ունեցող ապրանքներ Հայաստանի Հանրապետություն ներմուծելու դեպքում.

ՀՀ կառավարության 13.02.2020 թվականի «**Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից կամ նրանց հասցեով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ ծանուցման օրինակելի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 865-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»** թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակները գերազանցող միության ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքներ ներմուծելու դեպքում՝ ֆիզիկական անձը պարտավոր է ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր և վճարել անուղղակի հարկեր:

8. Ե՞րբ են Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք միության կարգավիճակ ունեցող անձնական օգտագործման ապրանքները տեղափոխվում առանց ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարում իրականացնելու.

Այն դեպքում, երբ միության կարգավիճակ ունեցող ապրանքները չեն գերազանցում ՀՀ կառավարության 13.02.2020 թվականի թիվ 171-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված չափաքանակները:

Ծանոթություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 13.02.2020 թվականի թիվ 171-Ն որոշմամբ, սահմանված չափաքանակներին կարող եք ծանոթանալ www.arlis.am կայք էջում:

9. Եթե ԵԱՏՄ անդամ պետություններից ֆիզիկական անձի կողմից ՀՀ ներմուծված ապրանքները գերազանցում են ՀՀ կառավարության 13.02.2020 թվականի թիվ 171-Ն որոշմամբ սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները, ապա ի՞նչ ժամկետում է պարտավոր ֆիզիկական անձը, հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիրը և վճարել անուղղակի հարկերը.

Եթե ֆիզիկական անձի կողմից տեղափոխված ապրանքները գերազանցում են ՀՀ կառավարության 13.02.2020 թվականի թիվ 171-Ն որոշմամբ սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները, ապա ֆիզիկական անձը պարտավոր է հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր և իրականացնել անուղղակի հարկերի վճարում՝ մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

https://www.facebook.com/petekamutner/

https://www.instagram.com/src_armenia/

https://twitter.com/petekamutner

https://www.src.am/am